

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պարզ ընթացակարգով լիցենզիայի տրամադրման

1. Հայտատու /իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ/ հայտը կից փաստաթղթերով ներկայացնում է ԱՀ ֆինանսների նախարարություն /այսուհետ՝ լիազոր մարմին/

2. Լիազոր մարմնում հայտը կից փաստաթղթերով մուտքագրվելուց հետո ուսումնասիրվում է և 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացվում է որոշում հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ

3. Լիազոր մարմինը հայտատուին տեղեկացնում է կայացրած որոշման մասին

3.1. Հայտը բավարարելու դեպքում հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, որից հետո լիազոր մարմինը հայտատուին տրամադրում է ԱՀ ֆինանսների նախարարի հրամանի պատճենը և լիցենզիայի բնօրինակը

3.2. Հայտը մերժելու դեպքում լիազոր մարմինը հայտատուին տրամադրում է ԱՀ ֆինանսների նախարարի հրամանի պատճենը

1. Հայտատուն (իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ) լիցենզիա ստանալու համար դիմում է ԱՀ ֆինանսների նախարարություն (Հասցե՝ Փետրվարի 20 փողոց, շենք 1)՝ ներկայացնելով հայտը պահանջվող փաստաթղթերով:
2. ԱՀ ֆինանսների նախարարությունում հայտը պահանջվող փաստաթղթերով մուտքագրվելուց հետո ուսումնասիրվում է և 5 աշխատանքային օրվա ընթացքում կայացվում որոշում հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ:
3. ԱՀ ֆինանսների նախարարությունը հայտատուին տեղեկացնում է կայացրած որոշման մասին:

Հայտը բավարարելու դեպքում հայտատուն, իր հերթին, որոշման կայացման օրը ԱՀ ֆինանսների նախարարություն է ներկայացնում պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (վճարման հանձնարարագիր կամ անդորրագիր), իսկ ԱՀ ֆինանսների նախարարությունը հայտատուին է տրամադրում ԱՀ ֆինանսների նախարարի՝ լիցենզիա տրամադրելու մասին հրամանի պատճենը և լիցենզիայի բնօրինակը.

Հայտը մերժելու դեպքում ԱՀ ֆինանսների նախարարությունը հայտատուին է տրամադրում ԱՀ ֆինանսների նախարարի՝ լիցենզիա ստանալու մասին հայտը մերժելու մասին հրամանի պատճենը:

Լիցենզիա ստանալու համար [հայտի ձևը](#) և [հայտին կից ներկայացվող փաստաթղթերի](#) ցանկը, [պետական տուրքի չափը](#) և [հաշվեհամարը](#) և լիցենզավորմանը վերաբերող օրենսդրությունը տեղադրված են ԱՀ ֆինանսների նախարարության կայքէջում, իսկ «Լիցենզավորման մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքները՝ www.arlexis.am կայքէջում:

Մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել ԱՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի մեթոդաբանության և ֆինանսական շուկայի զարգացման բաժին, հեռախոսահամար՝ (047) 94-08-41: